


ԱՄԵՆԱՅՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԻ
Պարտին ուղղութիւն առ—
Խմբագիր և Տնօրէն
«ՀԱՅԲ»-ի
ՏՈՒՔ . Մ . Ս . ԳԱԲՐԻԷԼԵԱՆ .



HAIK
ARMENIAN POLITICAL, AND
HYGIENIC FORTNIGHTLY.—
EDITED BY
M. S. GABRIEL, M. D.
202 W. 23d Street, New York, U. S. A.
To whom all communications must be
addressed.

Ձեռգիրք Ձեռն Վերագործուի
—Բաժանորդագրութիւնը—
Ամէն Երկրաց Համար
ԵՐԿՈՒ ՏՕԼՍՐ ԿԱՆԽԻԿ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ և ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Editor—M. S. GABRIEL, M. D.

Տէր-Խմբագիր—Մ . Ս . ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

202 W. 23rd St., New York City, U. S. America.

Terms for all Countries.
One Year - - - \$ 2.00.

Ա . ՏՄՐԻ

ՆԻՒ ԵՈՐԻ

ՅՈՒԼԻՍ 15

1891

ԹԻՒ 14

Entered as second-class mail matter. at P. O. New York.

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Յաւա՛ն—Նա՛մա՛յ Գա՛րիշ— Հայ Հայրենասիրաց
Յանձնախմբէն — Պարտաւորա՛ն Հ . Ն . Ն . Երբեք
Հ . Ն . Յանձնախմբէն Գա՛րիշ— Նա՛մա՛յ Գո՛շա՛նէն
Հ . Ն . Յանձնախմբէն — Նա՛մա՛յ Կա՛լա՛նայէն —
Հայեր յԱ՛մերիկա — Լա՛գրէն — յԱ՛մերիկա — Հա՛յ —
Եւրոպայի Օրէն — Եւրոպայի —

ՅԱՆՈՒՆ

«Արմէնիա» թերթն կարեւոր ծառայութիւն մի մա
տոյց ազգային գաղտնի՝ արթնցունելով գաղութական Հա-
յերն և ազգային ինքնօրինութեան գաղափարին ընտե-
լացունելով անոնք։ Զայս ուրանալ պիտի լինէր կոյր
կողմնակալութիւն։

Բայց մարդիկ կան որք կը կարծեն թի «Արմէնիա»
թշնամի է նա որ չհաւատար ու չհուշակեր թէ «Արմէնիա»
կարող է հայրենեաց փրկութեան Ս . Գործն ի գլուխ հա
նել։

Փորթուբալեաններ կան որք Հնչակեանց ձեռքով
ի Կ . Պոլիս կատարուած ցոյցն կը դատապարտեն, այն
ցոյցն զոր չափազանց պիտի գովէին եթէ Գորթուբալ-
եան խումբն կատարած լինէր զայն։

Իրաւ՝ ցոյցն մեծ փնտռներ ունեցաւ . հազարք բան-
տարկութեան և բիւրք փնտ Կրեցին ուղղակի կամ ա-
նուղղակի։ Բայց անարդարութիւն կը լինի Հնչակեանց
վերայ բաժնալ այդ նեղութեանց բոլոր պատասխանա-
տուութիւնն . ամեն դատէ ևս Հայեր կային հազարնե-
րով որք էրզրումի կոտորածին համար զայրացած՝ կը
հաւատային թէ ցոյց մ'ընելու ժամանակն հասած էր և
թէ կրնար օգուտ ծագիլ անկէ։

«Արմէնիա» կը խօսէր, և շատեր կը մեղադրէին
զայն ըսելով. «Գոյց մի գոնէ չընէր»։ «Հնչակ» եկաւ և
ցոյց մ'ըրաւ, և չհաւաններն կը մեղադրեն ըսելով.
«Յո՛յց մ'ըրին»։

Եղբայրներ, ոչ «Արմէնիա» մեղադրելի է խօսած
և միայն խօսած լինելուն համար, ոչ «Հնչակ» պարտա-
ւելի է ցոյց մի և միայն ցոյց մի ըրած լինելուն համար։
Միայն խօսքն և միւսայն ցոյցն, երկուքն ալ մեր ազգա-
յին նորոգուող կենաց նոր երևոյթներն են։ Ազգն է որ
թմրեալ էր և կը զարթնու, պառկած էր և ոտքի կ'ենէ։
Ազգն է որ «Արմէնիա» ով թոթովեց իւր բողբոջներ և
«Հնչակ»ով սկսաւ խլրալի։

Խոստովանինք թէ մեր խօսքերն, մեր խլրաւումնե-
րն և մեր մեղադրութիւններն բոլորն ալ մանկական են։
Միայն թէ ազայ լինելն ամօթ չէ թէն, ազայ միալ ա-
մօթ է։ Ժամանակն եկած է որ մեր յեղափոխական կե-
նաց մանկութիւնն քննելով պէտք եղած խրատն հա-
նենք։ Կուսակցական ակնոցով չնայինք անցեալ դիպաց,
այլ անկեղծ և անաչառ ոգով։

Ինչ էր Հնչակեան ցոյցին նշանակութիւնն։ —
Կարնոյ կոտորածին առթիւ զայրութիւն արտայայտութիւն
մ'էր այն ընդդէմ Թրքական բարբարոսութեան և Պատ-
րիարք Ալըգեանի ապիկարութեան։

Ինչ արդիւնք ունեցաւ ցոյցն։ — Եւրոպայի մէջ
բաւական ուղադրութիւն գրաւեց այն, զի . Դուռն ալ
միանգամ ցնցեց։ Զխաբուինք սակայն . Եւրոպա չնկատեց
ցոյցն իբր ազգային բարկութեան բնական պայթում մի,
այլ յեղափոխական խմբի մի գործն։ Պալատն ալ եր-
կիւղի և բարկութեան խառն զգացմամբ համակեցաւ ի
սկզբան, բայց երբ քննութեամբք երեւան հանեց թէ ո՛վ
են ցոյցին կատարողներն և ո՛րպիսի խեղճ գործինեով,
այն ատեն սկսաւ արհամարհոտ կատաղութեամբ հալա-
ծել ցոյցն ընողներն և անոնց հետ բոլոր ազգն։ Այն ցոյ-
ցին ի վեր Պալատն ամենայն հնարաւոր միջոցներով այն-
պէս կը նեղէ Հայ հպատակներն որպէս երբեք նեղած
չէր անցեալ դարուց մէջ։

Պալատն այս աստիճան անխղճութեամբ կը վար-
ուի Հայոց հետ ոչ վասնզի անոնց զօրութենէն կը
վախնայ, այլ անոնց օրինակին զօրութենէն։ Մա-
նաւանդ Մայրաքաղաքին մէջ այնպիսի անօրինակ ցոյց
մի յոյժ վտանգաւոր կը նկատուի իբրեւ հնարաւոր առ-
թիւ մեծագոյն խռովութեանց։ Սուլթանն ունի Թուրք
կուսակցութիւն մի իրեն հակառակ և իւր թագին վերայ
դողալու պատճառներ . ունի Քուրդ, Արաբ, Ասորի,
Չէքէզ հպատակներ, ամէն ցեղ՝ առաւել կամ նուազ գո-
գոն՝ կը բաղձայ վիճակի փոփոխութեան մի։ Այս ցեղե-
րէն ոմանք առիթ կը փնտռեն իրենք ևս շարժելու հա-
մար, իսկ անկարողներն կը սպասեն որ ուրիշներն շար-
ժին և իրենք հետեւութիւններէն օգտուին։ Սուլթանն՝
լաւ իրազեկ այս ամենուն՝ անհնարին զայրոյթ զգաց
Հայոց ցոյցին համար, և ճանաչելով հանդերձ ցոյցն ը-
նողներուն փոքր թիւն և աննշան ոյժն, բոլոր ուժովն
ճմլեց զանոնք և կը ճմլէ գեռ որպէս այն վախկոտ անձ
որ ճայթող լուցկին (քիպրիթ) կը խորտակէ կը փչիլէ ոտ-
քի տակ, ոչ վասնզի լուցկին ինքնին ահաւոր է, այլ վա-
սնն զի կրնայ քաղաք մի հրդեհել։

Ի մեծ գոհութիւն Պալատին՝ Կ . Պոլիս կրակ չա-
ռաւ Հայոց ցոյցէն . վասնզի ցոյցն ոչ թէ՛ զօրութեան

այլ դրդութեան արդիւնք էր. ուստի և տերեւի բոցի պէս պահ մի փայլեցաւ և թողուց միայն մոխիր, մոխիր՝ որոյ վերայ անմեղներու բազմութիւնն դեռ ապաշխարանք կը քաշէ: Եթէ թրքաց ազատական կուսակցութիւնն աւելի հզօր լինէր և պատրաստուած, գուցէ այն վաղանցիկ ցոյցն բաւական լինէր գիրենք շարժելու, մանաւանդ եթէ Հայ յեղափոխականաց և նոցա միջեւ հասկացողութիւն կենար:

Հարցնենք այժմ թէ անցեալ շուքերէն և ցոյցէն ի՞նչ օգուտ եղաւ մեր Հայրենեաց: Ներսէսի աշխատութիւնք, Պէռլինեան դաշնագրոյ յօդուածն, Հայերէն և Եւրոպական լեզուօք մեր թերթերու այնքան աղաղակն, Հնչակեան ցոյցն, Հայ ժողովրդեան նախապաշտօնութիւնքն և օտարաց ուշադրութիւնն յարաճուն, այս ամենն ի՞նչ չափ բերին մեր Սուրբ Դատին:

Շահ, աւաճ, բնաւ չկայ: Մեր քաղաքացի Հայեր կ'աղքատանան աւելի արագ, գիւղացի Հայեր իրենց ապրուստի յետին տարրական միջոցներէն կը զրկուին, մեր վանքերու հոգերն կամաց կամաց կը կողոպտուին, դպրոցներէն Հայոց պատմութիւնն կ'աքորուի, «Հայաստան» բառն անգամ գործածել ոճիրներու կարգն կ'անցնի. Պատրիարք, Ազգային Ժողով, Սահմանադրութիւն, Եկեղեցական մեծաշորհներ, այս ամենայն հաստատութիւնք սին անուներու կը փոխարկուին: Պարզ քննադատական բառ մի չըթուենքէն սպրդեցունել երբեմն բաւական է մարդն ի բանտ կամ յաքսոր դատապարտելու, յայն ատիճանն հասած է Կառավարութեան կասկածոտ դիւրագրգռութիւնն:

Ամեն մարդ գիտէ թէ այս նահատակութեան վիճակն արդիւնք չէ լոկ թուրքիոյ ընդհանուր անկման, այլ մեր պահանջմանց և յեղափոխական խլրտումներուն: Եթէ մեր Հայրերուն պէս մուռ ընէինք, այսքան չէինք չարչարուիր:

Ուրեմն մեր բոլոր ջանքերուն արդիւնքն ցայսփայր ուրիշ բան եղած չէ բայց եթէ աւելի յոռեգոյն դառնալն այն յոռի վիճակին որոյ դարմանն կը խընդրեմք:

Այս լինելով իրաց տխուր վիճակն, ի՞նչ պարտ է ընել:

Ե՞ս դառնանք: Գլխիկոր և զղջացած՝ դառնա՞նք իծոց Բ. Դրան. մեղայ ըսենք, որպէս Պէնճէմիներ կը խրատեն մեզ: Ըսե՞նք Սուլթանին թէ «երջանկութեան վերջին ծայրն հասած ենք» իւր հայրական թեւարկութեան ներքեւ, թէ Բրդերն գթած են, Չէրքէզներն՝ ողորմած և կառավարիչներն՝ արդարա՞նք:

Ո՛չ, ո՛չ, չենք կրնար ըսել զայդ: Եթէ մեք այնքան քորափրաւ և փայտամիտ լինինք մինչև ըսել այդպիսի ինչ, աւեր և աւերակ, քակ ու քանդ, փայտ ու քար Հայաստանի պիտի աղաղակէին և ստէին զմեզ:

Չենք կրնար ետ դառնալ. չենք կրնար մեր արիւնագիր բողոքներն լեզուլ. չենք կրնար սեւին ձերմակ ըսել և գայլին՝ դառն:

Ուրեմն պէտք է որ մէկ ձեռքով բարձր բռնեմք մեր բողոքն ի տես համօրէն քաղաքակիրթ աշխարհի, մանաւանդ Պէռլինեան Դաշնագիրն ստորագրողաց. բարձր բռնենք մեր բողոքն, այսինքն անմեղ բանտարկելոյ և աքսորելոյ, առեւանգեալ քոյրերու, այրեցեալ Օհաններու և այրիացեալ թշուառներու բողոքն յաւիտենական, անլռելի և ահաւոր:

Իսկ միւս ձեռքով պարտիմք բռնել ՍՈՒՐԻՆ:

Այո՛, գրչին քով սուր, իրաւանց քով զօրութիւն և բողոքոյ քով բռնութիւն:

Մեր Արդարութիւնն ստիպուած է կռթնիլ երիտասարդ Չօրութեան:

Այսպէս է բոլոր աշխարհի մէջ. ա՛յսպէս և ոչ այլապէս կրնայ լինիլ Հայաստանի մէջ, Հայութեան համար եւս:

Բայց զօրութիւն բառն չչփոխենք ցոյցի հետ: Երեւի լինիլ չէ: Եւրոպեան Տէրութիւն մի երբեմն նաւային ցոյց մի կ'ընէ հակառակորդին դիւանագիտական յամառութեան յաղթելու համար, և սակայն ցոյցն կը յաջողի չնորհիւ այն ահագին զօրութեան որոյ ցուցիչն կամ նշանակն է այն: Եթէ Հայքս բոլոր մեր ուժ գործածեմք ցոյց մ'ընելու և անկէ յետոյ բան մի չունենանք, և աւելի մեծ բան մի, երեսան հանելու, պիտի նմանիմք այն մարդուն որ ձեռքն վեր կը վերցունէ և չկրնար դարնել. պիտի լինիմք փայլակ առանց շանթի, և զթշնամին պիտի գրգռած լինիմք փոխանակ վախցունելու, լուսաւորած փոխանակ այրելու:

Ո՛չ, ե՛ղբարք, ցոյց չէ այն գոր կը մնայ մեզ կազմակերպել, այլ ճշմարիտ ԶՕՐՈՒԹԻՒՆ: Ժամանակ մի կար խօսելու, ժամանակ մի կար ցոյց ընելու, և այժմ ժամանակ է զօրութեամբ գործելու: Նոր և մեծ քայլ մի առնելու ժամանակն հասած է: Բայլ մի դէպ յառա՛ջ:

Եւ ո՞րն է այդ քայլ— Հայ Գաղթական Աշխարհին կազմակերպութիւնն է այն: Տեղական, անջատ, փոքր կտորներէն մեծ մարմին մի չինքն է այն: Տեղական Յանձնախմբերն և առանձին գաղթականութիւններն մեծ տիեզերական կեդրոնի մի հետ կապակցելն է այն, ինչպէս մեծ գործարանի մի մէջ ամէն խողոր և մանր մեքենայք կապակցած են մի կեդրոնական շարժիչ մեքենայի հետ:

Ժամանակ է զայս ընելու վասն զի կը տեսնենք թէ ամէն կողմ զգալի եղած է այնպիսի կեդրոնացուման մի պէտքն: Մեզ հառնող նամակներէն կը տեսնեմք թէ ամեն ուրեք հասուն մտքի տէր և խորհող ազգայնոց թիւն բաւական մեծ է այժմ: Նիւ Եորքի Հ. Հ. Յանձնախմբին ուղղեալ պաշտանօնական գրութեաներն կը ցուցնեն նոյնպէս թէ գաղթականութիւնք պատրաստ են Մեծ Միութիւն մի և Մեծ Զօրութիւն մի կազմակերպելու: Նոյն ինքն անուս և դարձաւոր դատերուն մէջ շատուոր են այնպիսի լուրջ անհատներ որք ըմբռնած են այս նոր քայլն առնելու պէտքն:

Տէ՛ր գործիչներ, վայրապար կ'աշխատիք սուս չզիտեմ լինիլ. շարժումն սկսած է և յաջողութիւնն ըստոյգ է: Չեր լուծիւնն գայթակղեցուցիչ հանդամանք առնելու վերայ է հասարակութեան առջեւ: Ի՛նչ, ոյդքան հակառակութիւն կարող էք գործել. ո՛չ ապաքէն ձեր բանից և ձեր մասնաւոր ընկերակցութեանց չնորհիւ մշակուած և պատրաստուած է Հայ Գաղթական Աշխարհն այս նոր շրջանն մտնելու: Միթէ կրնա՞ք ցաւիլ եթէ նա աւարտած է իւր մանկական հասակ և կ'ուզէ երիտասարդի հզօր քայլերն առնուլ: Տեսէ՛ք, Հայ աշխարհի հայրենասիրական զգացմանց և խորհրդոց նոր հոսանքն այնքան առատացած է որ ձեր անհատական տնօրինութեան անձուկ սահմաններէն դուրս կը գեղու. և ուրախ եղէք. այո՛, միայն ուրախ կրնաք լինիլ եթէ ճշմարիտ հայրենասէր էք: Չեր պարտքն է ոչ թէ ձեր ազգեցութիւնն և ձեր արդէն կազմած ընկերութիւն թուժի նման դնել այս հիւնաւի հոսանաց դէմ, այլ ձեր առուակն ալ անոր խառնել խնդութեամբ. բայց եւ թէ յամառիք, գիտցէք թէ յարաճուն հոսանքն ձեր թուժերն պիտի ձեղքէ անցնի ամեհարար:

Գործի՛չներ, յառա՛ջ:

Յանձնախումբք, յառա՛ջ:

Ժողովուրդ, յառա՛ջ,

ՅԱՌԱՋ:

Նիւ-Եորքի ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՅ ՅԱՆՉՆԱ. — ԽՈՒՄԲՆ Հաճութեամբ կը հրատարակէ իւր շրջաբերականի տրուած պատասխաններն նայնութեամբ եթէ համառօտ են, ամփոփելով՝ եթէ յոյժ երկար են, որպէս զի անոնք որք դեռ պատասխանած չեն, կարենան օգտուիլ: Նաեւ կը հրատարակէ զիւր դարձ պատասխանեոյ, երբ կարեւոր բացատրութիւն կը պարունակէ՝ նոյնպէս յառաւելագոյն պարզութիւն խնդրոյն:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ

ՆԱԽԵՎ

ՓԱՐԻՉՈՒ Հ. ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ

Բարիկ 25 Յունիս 1891

Յարգածեալ Աստնապետ

Հայ Հայրենասիրաց Յանձնախմբին

Ի Նիւ Եորք

Պատիւ ունեցանք ստանալու նախորդ ամսոյ 7 թուա կանաւ՝ Պատուարժան Յանձնախմբիդ շնորհակալան նամակագրէս կեդրոնական Յանձնախմբի մը կազմութեան կանոնագիրն:

Յանձնախումբս, Յարգելի Յանձնախմբիդ շնորհակալան համիմաստ գանձելով իւր նպատակին, կ'ընդունի կեդ. Յանձնախմբի մը կազմութեան սկզբունքը, և համարձակութիւն առնելով Ձեր հրաւերէն, ներկայիս կ'ուզայ հետեւեալ բարեփոխութիւններն առաջարկել կեդ. Յանձնախմբին կազմութեան կանոնագրոյն մի քանի յօդուածոց նկատմամբ:

Գ. Յօդուածը ի մէջ այլոց կը տրամադրէ որ «կեդ. Յանձնախումբը բաղկանայ միայն երեք անդամներէ» կը կարծեմք թէ. նախ ազգին վստահութիւնը շահելու, և ապա անկողնակից կերպով գործելու համար, Յանձնախումբը պարտի բաղկանալ հինգ անդամներէ, որ գոնէ կարենայ ունենալ երեք ձայնի մեծամասնութիւն մը:

Ե. Յօդուածը կը տրամադրէ «կեդ. Յանձնախմբի մէջ մի անդամը 7500 Փրանքի տարեկան թոշակ մը ընդունի» Այս հաշուով Յանձնախումբը պիտի ունենայ, եթէ երեք անդամէ բաղկանայ, հանդերձ զանազան ծախիւք 30,000 Փրանքի տարեկան անխախտ ծախք մը: Իսկ եթէ հինգ անդամէ բաղկանայ պիտի ունենայ 45,000 Փրանքի ծախք մը, որ կարելի է մեր ազգին աչքին մի քիչ խոշոր երևնայ, և ժողովուրդը զայս առարկելով չուզէ իւր լուծման յանձնել Յանձնախմբին, որով նորա կազմութիւնն վտանգի մատնուած կըլլայ իւր ծննդեանէն յառաջ: Կարծեմք թէ աւելի լաւ կըլլայ որ մի միայն քարտուղարը պատշաճ թոշակ մը ստանայ, իւր պաշտօնը անընդհատ կերպիւ կատարելու ստիպեալ ըլլալու համար:

Զ. Յօդուածը ի մէջ այլոց կը տրամադրէ որ «կեդ. Յանձնախումբն եթէ ուզէ ազատ ըլլայ, յարմար վայրկեանին մի քանի թերթեր հրատարակելու, առ ի պաշտպանութիւն Հայրենեաց Սուրբ դատին» կարծեմք թէ աւելի խոհեմութիւն եղած կըլլայ, եթէ սոյն նպատակաւ արդէն հրատարակեալ մի քանի թերթերու նիւթական և բարոյական օգնութիւններ ընծայուի, քան թէ նոր թերթերու հրատարակման ձեռնարկուի. վասն զի այժմու թերթերն երբ տեսնեն թէ իրենց շահուց սպառնացող մի քանի թերթեր ևս հրապարակ կուզան, պիտի սկսին ամեն ջանք ի գործ դնել ժողովուրդին վստահութիւնը պահպանելու կեդ. Յանձնախմբին վրայէն, որով կեդ. Յանձնախումբը իւր ձեռքով իւր գոյութիւն վճարողի պիտի ենթարկէ:

Արդ լիայոյս եմք որ Պատուարժան յանձնախումբդ ի նկատի առնելով զայս անդեկութիւնք, պիտի բարեհաճի զայն քննել յօդուած Սուրբ Դատին մեր թշուառ Հայրենեաց:

Մաղթելով կատարեալ յաջողութիւն Ձեր ձեռնարկած ազդօգուտ կազմութեան, խնդրեմք հաճեցէք ընդունիլ մեր յարգանաց հաւատարմքն:

Ի դիմաց Հայրենասիրական Յանձնախմբին Բարիկու Աստնապետ Աստնապետ ԳԵՈՐԳ ԷՔՄԷՔՃԵԱՆ Գ. ԷԳՆԱՅԵԱՆ (կնիք Յանձնախմբին)

Ահաւասիկ օրինակն նամակին զոր Նիւ Եորքի ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՅ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ յղեց առ Հ. Հ. Յանձնախումբն Փարիզու ի դարձ նորա պատասխանելոյն:

Մեծապատիւ Տիար

Աստնապետ Հայրենասիրական Յանձնախմբին ՓԱՐԻՉՈՒ

Պատիւ ունեցանք ընդունելու Ձեր գրութիւն Յունիս 25 թուակիր՝ ի պատասխան մեր շնորհակալանքին, և մեծապէս ուրախացանք որ մեզ համիմաստ կը գտնուի Ձեր Պատ. Յանձնախումբ ի մասին կեդր. Յանձնախմբի մի կազմութեան:

Ձեր երեք դիտողութիւններն խորհրդածութեան նիւթ ընելով՝ կը փութամք հետեւեալ պատասխաններ կայացունել Ձեզ:

1. Ձեր դիտողութիւնն թէ կեդրոնն պարտի բաղկանալ ոչ թէ երեք այլ հինգ անդամներէ, մեզ կը թուի բանաւոր:

2. Կեդրոնի անդամոց թոշակի մասին կը թելադրէք որ մի միայն քարտուղարն պատշաճ թոշակ մ'ըստանայ: Յանձնախումբս անկարող է տեսնելու թէ միւս չորս անդամներն, որք Ազգէն պաշտօն ընդունած՝ նմա պիտի ընծայեն իրենց ժամանակ ընդունելու, ո՞րպէս պիտի Հայթայթին իրենց ապրուստ եթէ թողուն անթոշակ: Մեզ կը թուի թէ բաւական բազմաթիւ քուէարկուներ պիտի գտնուին զաղթականութեանց մէջ՝ այնպէս որ գոյացեալ ազգային տուրքն հերիք լինի կեդրոնի անդամոց իւրաքանչիւրին թոշակին՝ փոքր ի չափէ գոհացուցիչ: Ան ուրիշ խնդիր եթէ անդամոց ոմանք անկարօտ լինելով թոշակի, անձնութեամբ մերժեն դրամական ո և իցէ վարձատրութիւն:

3. Պատ. Յանձնախումբդ կը թուի սխալ ըմբռնած լինիլ Ծրագրի Յօդ. Է. ի այն մասն որ թերթերու հրատարակութեան կը վերաբերի: Մեք կը յուսամք թէ կեդրոնի անդամ պիտի ընտրուին Լոնտոնի և Մարսիլիոյ մէջ այժմ թերթ հրատարակող մեր գործիչներ, ինչպէս նաև «Հնչակ» եան մի. ըստ այսմ յուսոյ կ'ըսեմք թէ կարենան, եթէ յարմար վարկանին, շարունակել այն թերթերու հրատարակութիւնն մէկ՝ երկու կամ երեք լեզուով և ընդ տնօրինութեամբ ամբողջ կեդրոնին: Եթէ կարծէինք թէ նոքա պիտի մերժեն անդամակցիլ կեդրոնին, երբ ընտրուին, թերթի խօսք բնաւ պիտի չընէինք:

Հաճեցէք, Մեծ. Տէր, ընդունիլ մեր խորին յարգանք:

Ի դիմաց Հ. Հ. ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ ՆԻՒ ԵՈՐԻՔԻ

Աստնապետ Աստնապետ

Յ. Կ. ՀԻՒՐՄԻԻՉ Գ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

ՆԱԽԵՎ ԳՕՔԴԵՆԻՆ

Ֆօքլան ի Ռուսմանիա 31 Մայիս 1891

Անձնուրաց Հայրենակից

Հայրենասիրական զգացմանց ամենաքաղցր տեսակաւ ընդունեցայ Ձեր ամսոյս 7 ին տպագրեալ նամակն հանդերձ ներփակ ծրագրան, ուշի ուշով ընթերցայ զայնս որոց սրբազան նպատակի նախաձեռնութեան մասին Ամերիկայի գաղթական Հայոց ոգևորիչ Տեսարցք հետին խնդակցիմք ի բոլոր սրտէ, զի Լրագրաց ընթերցողներէն հեռաւոր Հայ հոգիներն արդէն բաւական ժամանակ ի վեր միութեան այդ գաղափարին պէտքն բաժարցուկապէս զգալի կը տեսնէին մեր ազգին վրայ ծանրացուցական ծանր բաժակն անցունելով փութացնելու հաւաք յԱրեւելս Հայոց այն պայծառ աստեղ ծագման մար յԱրեւելս որուն կը ձգտին ամեն ճշմարիտ Հայու սիրութեամբ և հոգին. — Այս առթիւ նախ կը բարեմաղթեմ օրինակից որ շուտով այդ միութեան սրբազան գաղափարն գործնական կերպարանք մ'առնու յօգուտ մեր և

ձեր անկեալ, այլ որբազան Հայրենեաց կենսական Դատին, որ կրնայ վնասուիլ, որպէս հեռաւոր նշմարքներ կ'երեւին, կարգ մի անխոհեմ հրապարակագիրներու և գործիչներու բռնած եսական ուղղութեան հանդէպ:

Մեզ համար շատ փափաքելի էր որ Ռումանիոյ Հայք գտնուէին այն միութարական հանգամանքներու մէջ, որով միայն կրնային ձեր իրապէս ազգօգուտ ծրագրին նպատակն պսակել, սակայն կը ցաւիմ որ առ այժմ չպիտի կարենամ Ձեզ դոհացուցիչ պատասխան մը տալ ձեր առաջարկած յանձնախումբ կազմելու վերաբերութեամբ:

Ռումանիոյ մեր Հայրենասէրքն դժբաղդաբար սակաւաթիւ ըլլալով՝ բաղձացեալ նպատակին չպիտի կարողանան հասնիլ, քանզի նոցա այժմեան ճիգերն ի դործ կը դնեն իրենց ազգային էութիւնն պահպանելու որ մերձակորոյս վիճակի մը ենթարկեալ է կարգ մի տխուր պարագայից բերմամբ, զայս գրելով մեր նպատակն ձեր հայրենասէր սիրտն վշտացնել չէ, այլ ցաւիմ ասել թէ ձեր առաջարկութիւնն գործնականապէս ի գլուխ հանելու համար, Ռումանիոյ Հայոց նկատմամբ, սակաւին կանխաձայն է, բայց չմոռնամ ասելու որ ապագան յուսահատական չէ և արդէն յիշեալ Հայրենասիրաց միակ նպատակն է Ռումանիոյ մեր ազգայնոց գոյութիւնն կործանիչ տարերքներէ պահպանելով հանդերձ, վերածընունդ տալ է անոնց ինկած ազգային գեացմանց, որովք պիպի կարենան ապագային այդ օրինակ ազգային կոչումներն սիրալոյսով ընդունել և արդիւնաւորել ի պըտակ ձեզ նման անձնուրաց Հայրենասէրներու և մանաւանդ ի վերածնութիւն մեր տառապեալ Հայրենեաց որուն վերականգման համար ոչ մի Հայ յուսահատելու տեղի չպէտք է ունենայ, երբ Աստուած կարող է իբարանցս յայտնէ յարուցանել զորդիս Հայկայ Արամայ և Տիգրանայ:

Ընդ այս ջերմապէս ողջունելով Ձեզ և գովելով Ձեզ անարկն Ձեր ազգօգուտ, մնամ յարգանք
Յ. Ս. ՖԵՐԷՍԹԱՆ

ՆԱԽԵԿ ԿԼԱՎԵԹԵԱՆ

Շնորհակալութեամբ կը հրատակեմք հետեւեալ նամակն զոր Կալկաթայի Հայոց ընկերութեան Պատ. Նախագահ, Մեծ. Տիար Մէլիք Պէկլարէ ընդունեցանք:

Chogda Bengal India 9 Մայիս 1891

Տէր,

Պատիւ ունիմ ծանուցանել Ձեզ ի Կալկաթա հաստատումն ընկերակցութեան մի, ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿ-ՑՈՒԹԻՒՆ անունով, որոյ նպատակն է աշխատիլ վաճառական, նիւթական և քաղաքական բարօրութեան Հայոց բնակեցոյ ի Հնդկիս, ի Մայր Հայրենիս և այլուր:

Նաև պատիւ ունիմ յղել Ձեզ մեր ընկերակցութեան կանոնադրոյն օրինակն, և խնդրել Ձեռնէ որ ուղարկէք ինձ օրինակն կանոնադրոյն այն ընկերակցութեան որոյ ատենապետն էք, որպէս զի կարողանայ մերս իր կանոններն կատարելագործելու համար առնուլ անկէ այնպիսի կէտեր որք մեր անգամաց յարմար թուին այս ընկերակցութեան և անոր յառաջդիմութեան նպատակով, մանաւանդ Ազգային Բաժնին: Շնորհակալ պիտի լինիմ եթէ հաճիք Ձեր ընկերութեան նպատակին և անոր հասնելու համար ընկալելու միջոցներուն մասին համառօտ տեղեկութիւն տալ ինձ:

Նաև շնորհակալ պիտի լինիմ եթէ օգնէք ինձ յարաբերութեան մտնելու ուրիշ ազգային ընկերակցութեանց և անհատից հետ ուր ալ որ գտնուին, յղելով ինձ նոցա անուանց և հասցէներու ցանկ մի:

... Ընդունեցէք, Խնդրեմ, յարգանքս հաւատարմ, և թոյլ տուէք ինձ կոչել զիս, Ձեր հնազանդ ծառայն
Յ. Տ. ՄԷԼԻՔ ՊԵԿԼԱՐ

Նախագահ Ազգային Բաժնին Կալկաթայի Հայկական Ընկերակցութեան:

ՀԱՅԵՐ ՅԱՄԵՐԻԿԱ

Հետզհետէ Ամերիկա հասնող մեր Հայրենակիցներէն կը տեղեկանամք թէ Թուրքիոյ մէջ ևս քան զէս կը սաստկանայ այն ախտն զոր կարելի է ամբարիկամով թիւն կոչել, և ճշմարիտ հանրախտի մի պէս քաղքէ քաղաք և գաւառէ գաւառ կը տարածուի: Եթէ գաղթողներու թիւն այնքան ահագին չէ, պատճառն այն է որ կառավարական, զբամական կամ ընտանեկան դժուարութիւններէ կ'արգիլուին:

Ամերիկա եկող Հայեր ընդհանրապէս 18 էն մինչեւ 40 տարեկան են, և անոնց հասակն, միջին հաշուով, կարծեմք 26—28 է: Միջին տարիքն անցուցած մարդիկ չեն համարձակիր գալ այսչափ հեռուն, իսկ անչափահասներն իրենց մեծերուն հրամանն չեն կրնար ստանալ, այնպէս որ եկողներուն հարիւրին իննսունն ամուրի երի տառարդներ են ճիշդ այն հասակին մէջ յորում մարդ մեծ դժուարութիւններ կրնայ յանձն առնուլ դրամ չահելու համար:

Մինչև ցարդ կարելի չէ եղած հաշիւ մ'ընել թէ որքան Հայ կայ Ամերիկա: Ըստ ոմանց 6000, ըստ այլոց 3000 է նոցա թիւն: «Հայք» ռուղըալ թղթակցութիւններէն այն տպաւորութիւն կ'առնուի թէ մերազնեայ թիւն այս երկրին մէջ հաւանօրէն 4 հազարի մօտ է, ըստ որում որ կողմէ որ վիճակագրութիւն ընդունեցանք, Հայոց թիւն կարծուածէն աւելի գտնուեցաւ:

Ամերիկայի Հայոց մեծ կէսն Խարբերդցի, Տիգրանականցի, Մարտուանցի և Մալաթիայի, իսկ մնացեալք Փոքր Ասիոյ Կիլիկիոյ և Հայաստանի այլ և այլ կողմերէն են, ինչպէս Կ. Պօլիս, Նիկովիդիա, Թէքիրտաղ, Կիրասոն, Կեսարիա, Եսզղատ, Զմիւռնիա, Մարաշ, Ատանա, Ուրֆա, Կարին, Վան, Բալու, Երզնկայ, Ակն, Չնքուշ, Չմշկածագ, ...

Այս Հայերու մեծամասնութիւնն զանազան կարգի գործաւորութեամբ կը զբաղի, շարաթական 4 թալէոնէն մինչև 50 թալէո վարձքով: Փութամբ յաւելուլ թէ 50 թալէոնի շարաթականն բոլորովին բացառիկ է. գիտեմք թէ Հայ մի Նիւ Եորքի մէջ շարաթական մինչև 80 թալէո ալ ընդունած է: Նոքա որք շարաթն 15—20 թալէո կ'առնուն, շատ յաջող դաս կը սեպուին, և բաղդատմամբ քիչուոր են. իսկ 8 կամ 10 թալէոնով աշխատողներն են մեծամասնութիւն: Ձեմք կարծեր թէ միջին հաշուով Հայ գործաւորի շարաթականն 10 կամ 11 թալէոն անցնի: Տակաւին հարկ է որ այս հաշիւն ճշգրտեմք իջեցունք: Գործաւորն քանի մի ամիս կամ աւելի երկար աւտեն աշխատելէ յետոյ կրնայ մնալ անգործ նոյնքան երկար աւտեն: Կան որ վեց ամիս, մէկ տարի կը մնան պարապ: Եթէ շարաթական վարձքն բաշխենք անգործ անցուցած շարաթներուն վերայ, պիտի գտնենք թէ միջին հաշուով գուցէ 8 թալէո կ'իջնէ շարաթականն:

Որովհետև Հայերն ինայասէր և ժուժկալ են ընդհանրապէս, այս չափաւոր շարաթականէն կարող կը լինին փոքր գումար մի մէկդի դնել և իրենց ընտանեաց ալ բաժին հանել: Խարբերդի կողմէն 1000 ի մօտ Հայեր կան հոս, որոց ամէն մէկն, միջին հաշուով, տարին 20 լիրաի չափ հաւանօրէն կը յղէ Թուրքիա, այն է տարին 20 հազար լիրայի չափ ընդ ամէնն: Աս մեծ գումար է Խարբերդի նման գաւառի մի համար, և Թուրք կառավարութիւնն ալ իր խոշոր բաժինն կ'ընդունի անկէ զանազան տրոյց ձևին տակ:

Գործաւոր դասուց մէջ շատ դժգոհութիւն կայ: Նախ որ գործ գտնել բաւական դժուար է, երկրորդ որ գոհացուցիչ չարթական ընդունիլ գիւրին չէ: Հայ գործաւորը ընդհանրապէս անգղիերէնի անտեղեակ, և այս երկրին գործերուն ալ անհմուտ ևն, ուստի և իրենք տեղացի գործաւորաց չափ յարգի չեն: Նաև գործարանաց մէջ անմաքուր օդ ծծելու, աղտոտ գործեր ընելու, ծանր ծանր բաներ վերցնելու ստիպուած են: Կան որ հարկադրեալ են ցերեկ քնանալ և ցայգ աշխատիլ, որովհետեւ մեծ գործարաններու մէջ կրակն չմարիւր և մեքենան չկենար երբէք, ուստի և հարկ է որ գործաւորաց բաւական բազմութիւն մ'ալ գիշեր ատեն աշխատի:

Անցեալ տարի Ուսմբը քաղաքի թէլի գործարանն երբ այցելեցի, բաւական յստակ գաղափար առի գործաւորաց վիճակին վերայ: Հոն կարծեմ մի քանի հարիւր Հայեր կ'աշխատէին ուրիշ ազգէ հտգարաւորաց հետ: Անդ ուր երկաթի ահագին զանգուածներ, բոլորովին հրաշէկ, հանեն հնոցէն և ձուլերու կը վերածնեն. նաև անդ ուր գործիներ կը ձուլեն, այն աստիճան տաք է օդն որ այցելուն հազիւ կրնայ մի քանի վայրկեան դիմանալ, և առկայն գործաւորն բոլոր օրն հոն կը մնայ: Գործարանի սրահներէն շնամ գիտեր որն էր, ուր մտնելով գտայ օդըն թթուներու շոգիովն՝ այնպէս լեցուած որ չէի կըրնար շնչել, խեղդ զգելով դուրս ելնել փութացի. սակայն անդ ուր ես չէի կրնար երկու վայրկեան մնալ շուրջն նայելու համար, գործաւորն կանցունէր ողջոյն տիւն:

Այսպիսի օգերու մէջ աշխատող, շնչող և յագնող պանդուխտ Հայն եթէ այլ և այլ ակարութեանց ենթարկուի, միթէ պէ՞տք է զարմանալ: Ոչ սակաւ երիտասանդներ տեսած եմ հոս թոքախտէ բռնուած, ուրիշներ՝ անմարտողութեան կամ այլ զանազան ախտերու մասնուած: Մի քանի շարթ առաջ կարնոյ կողմէն երիտասարդ մի եկաւ քովս, նիհարացած և տժգոյն, որ կը հազար ժամանակէ մ'ի վեր: Քննելէ յետոյ խորհուրդ տուի վերադառնալ հայրենիք. և հակառակ իր կրկին և կրկին հարցմանց՝ չիմացուցի իրեն թէ թոքախտէ բռնուած էր: Որոշեց հետեւեալ օրն մեկնող հայրենակիցներու ընկերանալ: Բարձրահասակ, ուշիմ, վայելչադէմ երիտասարդ մ'էր 20 տարեկան: Զինքն քաջալերական բանիւք ճամբցի. բայց ետեւէն հայելով տեսայ թէ ի՞նչպէս գլխիկոր, տկար և յուսահատ քայլերով կ'երթար... մե՛ղք այս Հայ կտրիճներուն...:

Նիւ Եորքի Հայկական Միութիւնն շատ անգամ կանոնաւոր վիճաբանութեան նիւթ ըրած է սա խնդիրն թէ պա՞րտ է Հայոց Ամերիկայ գալուն հակառակիլ քանի որ այնքան անյարմար մարդիկ կուգան հոս և թշուառութեան կը մատնուին: Մինչև ցարդ ու իցէ միջոց գտնուած չէ գաղթային շարժումն չափաւորելու: Փորձառուներն այս տեղէն կը գրեն իրենց ամերիկամոլ ագգականաց և ծանօթից չգալ, բայց իրենց փորձառութենէն չեն օգտուիր ամենն: Շատ անգամ յօդուածներ գրուած են Պոլսոյ լրագիրներուն այս մտօք, բայց չերեւիր թէ շատ ազդած լինին: Անցեալ տարի Տիգրանակերտցի հայրենակից մի կը խնդրէր վերադառնալ տուն, իր գաւազան քով, բայց դրամ չունէր ճամբորդելու համար. քանիցս եկաւ զմեզ տեսնել այս մասին և իւր խեղճութիւնն պատմել, որ իրօք աւելի խորին էր քան ինքն կը կարծէր. մինչև անգամ իր ճամբան քաղաքին մէջ գտնելու համար կարող չէր ուստիկանաց պարզ հարցում մ'ընել, այնպէս որ իր գնալու տեղւոյն հասցէն թղթի կտորի մի վերայ գրել և իրեն տուել էի որպէս գիցուցնէր զայն: Եթէ շարթին երեք կամ չորս թալէո չահելու կարող լինէր, ինքզինք բարեբաղդ պիտի համարէր, բայց չէր կրնար: Երբ պատրաստութիւն տեսնուեցաւ և դէպ ի թուրքիա ճամբու գրուեցաւ, խոստացաւ որ հոն քարոզէ բոլոր ուժովն և խօսք հասկցնէ Ամերիկամոլներուն: Այսպիսի խեղճեր ամէն գաւառէ ալ եկած և գացած են կարծեմք, և նոցա ականատես վկայութիւնն յուսամք աւելի ազդու լինի քան մեր յօդուածներ:

ԳԻՐԻՐ ՎԼԱՆ ԵՒՆՈՒՑՆՈՂԵՑ

ԼԲԱԳԲԵ
ՅԵՄԵՐԻՊԵՅ

Geo. P. Rowell & Co. 178 Դ տպագրութիւն Նիւ Եորք 1891

Ամերիկա գերազանցապէս գործի երկիր է, և ծանուցման երկիր: Վաճառատներ կան որոց իւրաքանչիւրն տարեկան 100 հազար թալէոի գումար մի կը զոհէ ծանուցման համար: Նիւ Եորքի վաճառատուն մի կրնայ բաղձալ իւր ծանուցումն դնել երկրին բոլոր նահանգաց լրագրերուն մէջ, կամ այն ամէն քաղաքաց մէջ որք առաւել քան 100 հազար կամ 50,000 կամ 25,000 բնակիչ ունին. կրնայ բաղձալ ծանուցանել այդ քաղաքաց իւրաքանչիւրին մէկ թերթին մէջ միայն կամ բոլոր կարեւոր թերթերուն մէջ: Այս ամէնն և ուրիշ բազում նմանօրինակ տեղեկութիւնն հաւաքել անհնար է վաճառականաց, ուստի և յատուկ գրքեր յօրինուած են, ուր ամէն ոք կրնայ մի քանի վայրկեանի մէջ գտնել ցուցակն լրագրաց և հանդիսից, հանդերձ ամենայն բաղձալի ծանօթութեամբք և մանրամասնութեամբք: Այս կարգէն է Ռօէլի մատենան:

Այս յոյժ խնամեալ մատենէն, որ 368 երեսներէ կը բաղկանայ, կը քաղեմք հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւններն:

Միացեալ Նահանգաց և Քանադայի մէջ այժմ հրատարակուող լրագրաց և պարբերականաց թիւն է 19,373 որք կը բաժնուին հետեւեալ կերպիւ:

Շարթական	14,000
Ամսօրեայ	2,625
Օրական	1,791
Կիսամսեայ	327
Կէս-եօթնեկեայ	238
Երկեօթնեկեայ	90
Երկամսեայ	76
Եռեօթնեկեայ	46
Եռամսեայ	180
	19,373

Այս թերթերուն մէջ 32 կան որք ամէն անգամ գոնէ 150,000 օրինակ կը հանեն. 38 հատ, որք 100,000 օրինակ կը հանեն:

Նիւ Եորք Նահանգն ունի 1958 թերթ, որոց 110ն ամէն մէկ անգամուն առաւել քան 25,000 օրինակ կը հանեն:

Միացեալ Նահանգաց և Քանադայի բնակչաց բոլոր թիւն կը հաշուի 67 միլիոն. հինգ հոգին մէկ ընտանիք սեպելով, կ'ունենանք 13 միլիոն 400 հազար ընտանիք: Ամէն մէկ ընտանիքի երեք տարեկան բաժանորդագրութիւն կ'իյնայ, միջին հաշուով. և որովհետեւ ոմանք ընաւ չեն առնուր կամ մէկ լրագիր կառնուն, այլք պէտք է որ առաւել քան երեք թերթի բաժանորդ եղած լինին: Շարթական թերթերու օրինակներն այնքան բաղձալի են որ ամէն մէկ ընտանիքի գրեթէ երկու թերթ կ'իյնայ կանոնաւորապէս:

Նիւ Եորք քաղաքին մէջ կը հրատարակուին թերթեր

Կրօնական	92
Բժշկական	42
Դատարարական	27
Ծաղրածու կամ երգիծաբան	14
Իրաւաբանական	10
Տղոց և դեռահասից	11
Ապահովագրական	12
Գիտական (ելեքտրական, երկրաչափական, մեքենատեղական, ազդրեկան, հանքաբանական)	39
Պատմական	3

Զբօսական	24
Երաժշտական և Թատերական	21
Նորածնութեան վերայ	24
Տանտիկնական կամ տնտեսական	14
Ֆռանմասնական	2
Բանական վերաբերեալ	4
Գինեհատական	8
Վաճառական և ելմտական	54
Ճարտարապետական	11
Արդուգարդու և կահ կարասեաց վերայ	10
Լրագրի և գրոց վերայ	10
Ոգելից ըմպելեաց և գինեոյ վերայ	7
Կառքերու վերայ	3
Ձգեստու և դերձակութեան վերայ	10
Ածխոյ և կազի վերայ	4
Դեղերու և ներկերու վերայ	6
Մանրավաճառական ապրանաց վերայ	9
Հրդեհորերոյ վերայ	2
Գլխարկի և մուշտակի վերայ	3
Օթեվաններու կամ պանդոկներու վերայ	5
Գիւտերու վերայ	5
Ակնագործներու և ժամագործներու թերթեր	4
Կոշկաց և ձիու կահուց վերաբերեալ	4
Նաւարկութեան վերաբերեալ կամ ծովային	6
Մետաղաց մեքենաներու վերաբերեալ	10
Լուսանկարչական	3
Տպագրական (թուղթ, տպագրութիւն, վիմագրութիւն և ելեքտրագրութիւն)	10
Երկաթուղեաց վերաբերեալ	13
Կարի մաքինայի վերաբերեալ	2
Ծխախոտոյ վերաբերեալ	3
Ֆռանսերէն լրագիրներու թիւն	114
Սպաներէն	38
Իտալերէն	13
Հոլանտերէն	14
Երբայական	8

Հ Ր Ա Ի Ե Ր

Ու՞ր եմ, սիրելի անուշ իմ դաւակ,
Որ՞ տեղ-թափառիս օտար երկնի տակ.
Հացով և սուգով խնդրեմ՝ քո գալուստ,
Զաւակ իմ նժդեհ, ե՞րբ է քո գալուստ:

Որդեակ՛կ, կարօտէս մեռայ ես արդէն,
Գոնէ՛ յղէ լուր մ' օտար այդ երկրէն.
Ասա թէ՛ սիրե՞ս թշուառ Հայաստան,
Ասա թէ՛ կուգա՞ս առ Մայր Հայաստան:

Ծառ, դաշտ, վերստին հազան դալարիս,
Ծիծառն ատենին դարձաւ գարունիս.
Իսկ ես տխուր դիտեմ թէ՛ ե՞րբ երեւիս,
Թերեւս թռչուն ինչ բերէ աւետիս:

Երկի՛նք. յղեցէ՛ք սիրուն իմ որդին,
Թող գա՛յ, ա՛հ փութով, բեկորն իմ սրտին.
Տեսնե՛մ կորովի որդին իմ գինուոր,
Տեսնե՛մ Հայաստան ազատ փառաւոր:

Ե՛կ, ե՛կ, որդեակ իմ, ե՛կ ի Հայաստան,
Շինել Հայրենիքդ որ արդ է խոսկան.
Գո՛ մօր և գտեր լինել քաջ պաշտպան,
Ուժե՛ղ որդեակ իմ, ե՛կ ի Հայաստան:

Ա. ԱՐՄԵՆԱԿ



ԱՄԱՌՆԱՅԻՆ ՕՂՆ

Ամառ եղանակին ամեն մարդ նուազ քաջառողջ է, ամեն ոք փոքր ի շատէ կը վատի, և շատեր զանազան տկարութեանց կ'ենթարկին: Մանաւանդ փափկակազմ և տկար անհատներն և մանուկներն շատ կը նեղուին: Չափահասք պաղ ջուր կը խմեն, իրենք զիրենք կը հովահրեն և ուրիշ միջոցներով կը զովանան չափով մի, բայց մանուկներն, մանաւանդ կաթնկեր հասակի մէջ, իրենք իրենց օգնելու անկարող՝ կը մնան տաքին ձեռքն և իրենց տառապանքն կը յայտնեն ճշեւով, քուն չլինելով, նիհարնալով և փորքուքով:

Արժան է որ հասարակութիւնն լուսաւորուի ամառուան օդին յատկութեանց նկատմամբ, թէ ինչո՞ւ նուազ առողջարար է: Նոյնպէս և ծնողք որքան ծնելաւէր կամ դայեակք գթասիրտ լինին, ոչ միշտ բաւական խմաստուն և փորձառու են մանուկներն ամառնային հիւանդութեանց դէմ պաշտպանելու համար: Ուրեմն հարկ է որ ինչ ինչ առողջարանական և բնախօսական ծանօթութիւններ պարզ լեզուաւ ամենուն առջեւ դրուին:

Ամառ եղանակն տկարութեանց և փորձարութեան աղի կուտայ հինգ գլխաւոր պատճառներով, որք են. —

1 Տաք օդն անօր է, հեաւապէս նուազ թթուածին կը պարունակէ, նուազ սննդարար քան ձմրան խիտ օդն: Տաք օդն ջուր խառնուած կաթի նման է նօսրութեան մասին, բայց այդ չէ բոլոր յանցանքն:

2 Ամառնային օդն ոչ միայն անօր է այլ և աւելի ապականեալ քան ձմրան օդն: Ամառ ատեն ամեն կերակուր և ըմպելի, ամեն բուսական կամ կենդանական մեղեք նիւթ դիւրաւ կը փտի և կը հոտի, վասն որոյ օդն ալ անոնցմով կ'ապականի: Դանք որ նոյն եղանակին է որ օդն նուազ արագօրէն կը մաքրուի: Գիտէ՞ք թէ ծովըն է որ ցամաքն և մթնոլորտն կը մաքրէ, անձրեւն կը մաքրէ օդն ու գետինն, այդ պարզ է: Բայց նուազ կը անձրեւէ ամառ ատեն: Դեռ ուրիշ ազդու միջոց մի կայ օդն մաքրելու, այն է հողմն որ ցամաքային օդն կը քրչէ կը տանի դէպ ի ծով, որպէս թէ բաղնիք, և ծովուն ալեաց և աղի սրսկումներուն զարնելով՝ բոլոր աղաւտութիւններն, փոշիներն, մանրէներն կ'ընկղմեցունէ ծովուն մէջ, այնպէս որ օդն լուացուած և մաքրուած կը դառնայ նորէն դէպ ի ցամաքն: Արդ, յայտ է թէ ամառ եղանակին հողմնուազ կը փչէ. ուստի և օդն բաղնիք քիչ անգամ գնացող մարդու պէս կը լինի:

3. Ամառնային օդն փնասակար մանր կենդանիներու բազմանալուն կ'օգնէ: Ամեն մարդ գիտէ այն գարշելին որ ամառ գիշերներն քուն փախցունելու կ'աշխատի և որ իր արժանաւոր անուամբ փայտոջիլ կը կոչուի: Սա ձմեռ եղանակին չկրնար կեանք վարել, բայց երբ տաքն կուգայ, սերմերն կ'արթննան և արագօրէն կ'աճի սերունդն: Արդ, պէտք է գիտնալ թէ քան զայս գարշահոտն աւելի մանր բայց աւելի փնասակար էակներ կան որք ամառ ատեն կը զարգանան, կը բազմանան, և շատերու մահ կը պատճառեն, թէ և այնքան փոքր են որ միայն զօրաւոր մանրացուցով կրնան նշմարուիլ: Ասոնք եւրոպեան լեզուաց մէջ մի քրոպ, պաքդէրի ևն անուններով կը կոչուին, իսկ Հայէնի մէջ կը կոչուի քաշահոտն ևն փոքրերն, մանրաճճի ևն, և որք կրնան պատշաճապէս անուանիլ ՄԱՆՐԱԳՈՅՔ կամ ՄԱՆՐԷ, յոքնակի՝ մանրէք, մանրէից ևն: Գիտութիւնը ապացուցած է թէ մանրէք՝ իրենց անհամար տեսակներով՝ մեծ դեր կը կատարեն աշխարհի մէջ, օգտակար և փնասակար դերեր՝ ալ: Որպէս թէ մանրէից աշխարհին մէջ, ուր անհատից թիւն անհաշուելի կերպիւ բազմապատիկ է քան մեր տեսանելի աշխարհի տարածոյն, նոյնպէս կան չարեր և բարիներ, դեռ և հրեշտակներ: Ոմանք մարսողութեան կ'օգնեն, այլք մարսողութիւնն կը խանգարեն, ոմանք խաղողն ի գինի աղնիւ կը փոխարկեն, այլք զգինին քացախի կը վերածեն: Ման-

բէից գործ է մանկական գոյէռան կամ հն տ ա խ տ ա-
կ ե ր ա լ փ ո Ր Լ ու ծ ու թ իւ ն ն յորմէ ամեն ամառ
այնքան տղայք կը մեռնին: Մանրէք են նոյնպէս ախտա-
ծին պատճառք այն արիւնախառն և ջերմոտ փորհարու-
թեան որ տիզանդէոի կամ դժաղութիւն կը կոչուի և
որ զոհ կը տանի ամառներն հազարաւոր մարդիկ: Թո-
քատապն (նիւմանիա), հետախան, թոքախտն, ժանտախ-
տըն, ծաղիկն, կեղծամաշկն (տիֆթէրիա) և այլն և այլն
տարափոխիկ և վարակիչ հիւանդութիւններ գործն են
զանազան մանրէից, որոց շատերն այս կամ այն եղանա-
կին, այս կամ այն կլիմային մէջ աւելի կը զարգանան
և կը գործեն:

Բայց սա ևս գիտնալ պէտք է թէ ինչպէս որ չար
մարդիկ ամեն մարդու չեն կրնար նոյն դիւրութեամբ
մօտենալ և փնտռ ընել, այլ աւելի ի չարն հակամիտե-
լոց և դեռահասից վերայ կը գործեն իրենց ազդեցու-
թիւն, այնպէս են նաև մանրէք: Սոքա իրենց կատաղու-
թիւնն այն մարդոց վերայ մանաւանդ իր թափին որք
արդէն անկանոն և անփութկալ կենցաղով, չարաչար
յոգնութեամբք և սրտամաշուքով իրենք զիրենք պատ-
րաստած են այն անտեսանելի բայց սոսկալի թշնամեաց
յարձակումներուն:

(Շարունակելէ)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

Առ ինամակալս «ՀԱՅԻ»ի

Տիար Յ. Վեհուկի կը գրէ Պուլկարիոյ Հասքօֆօ-
էն. «Եթէ միւս ազատաշունչ խմբագրութիւնք Հայկա-
կան Ս. Դատին նկատմամբ ազգային մարմնոյն աչքն և
այլ կարեւոր անգամքն ներկայացունեն «ՀԱՅԻ»ն ևս մեծ
պակասութիւն մը կը լրացունէ, այն է բանական մասն,
Ուղեղն է:» Նաև Տիար Մ. Ն. Արամեան կը գրէ Ռուս-
տիայէն. «Խիստ ուրախ եմ որ, «ՄՇԱԿ»ի նման մի այլ
լուրջ հրատարակութիւն ևս ունեցանք, զի այն ուղղու-
թիւնն՝ ոչ չհետեւում է յիշեալ թերթի պատուարժան և
բազմահմուտ խմբագիրն, նոյնը տեսայ ձեզ համար ևս:
... Մանաւանդ այժմ մեր տաղնապալից ժամանակում
որ կարծես Հայի համար գրական ասուպների բազմա-
տեղութեանց շարք մ' է բացուել, այսինքն՝ գրիչ շար-
ժողը հրապարակ իջնալ մի թերթ մտտեւ...»

Մեր վրայ չափազանց շատ լսել չտալու համար
կը զգուշանամք մեզ ուղղեալ սրտապնդիչ նամակներն
հրատարակելէ, սակայն չեմք կրնար հրապարակաւ մեր
ջերմագին շնորհակալութիւն չյայտնել այնպիսի ազնիւ
հայրենակցաց որք այնքան անձնուիրաբար կ'աշխատին, ա-
ռանց զմեզ անձամբ ճանաչած լինելու, տարածել «ՀԱՅԻ»ն
Եւրոպայի՝ Հնդկաստանի՝ Ռուսիոյ և Եգիպտոսի մէջ, և միւս
կողմանէ ալ կը քաջալերեն զմեզ նամակաւ: Կարելի չէր
աւելի խրախուսիչ պատիւ մ'ընել «ՀԱՅԻ»ի քան նման-
ցունել զայն ՌԻՂԵՂԻ կամ բաղդատել զայն «ՄՇԱԿ»ի
հետ, թագաւորին Հայ լրագրաց:

ԱՐԱՅԻՈՅ ԱՊՍՏՈՄԲՈՒԹԻՒՆՆ

Լոնտոնեան Թայմզ Արաբիոյ ապստամբութեան
մասին հետեւեալ տեղեկութիւններն կուտայ:

Ասիւներն եւ մէջնի և Հիւսիսի միջեւ փոքր գաւառ
մի կը բնակին, և իրենց պետն, Սաիթ-էտ-Տին, որոյ ա-
նուն կը նշանակէ «Հաւատոյ Սուրն» է Ապտիւլ-Բահմանի
քեռորդին, և երբ եւմէն Թրքաց ձեռքն անցաւ վերջնա-
պէս 1871 ին, Ասիւներու ցեղն բաղդատական անկախու-
թիւն մի ձեռք բերաւ: Նա պարտաւոր չէր Դրան զօրք
տալ, բայց միայն Արաբիոյ դէմ պատեալով դէպքին մէջ,
սակայն պարտաւոր է հարկ վճարել և կարաւաններուն
չգալիլ և ոչ ալ ուխտաւորներուն ճամբուն ապահովու-
թեան փնտռել: Միւս կողմէն, Սուլթանն կանոն ըրած
էր ամէն տարի ընծայ ուղարկել Ասիւներու Շէյխին. ու-
մանք կ'ենթադրեն թէ այս մասին զանցառութիւն մի

պատահած լինելով Սաիթ-էտ-Տին վիրաւորուած է, և
յապստամբութիւն մղուած:

Ձիարգ և իցէ, Սաիթ-էտ-Տին կը համարուի լինիլ այն
Արաբներէն որք դժկամակութեամբ Դրան վեհապետու-
թեան լուծն կը կրեն և կը բաղձան անկախ խալիֆա-
յութիւն մի ստեղծել Արաբիոյ մէջ: Նորա մայրաքաղաքն
ամրացեալ քաղաք մ' է, Շամիս-Միսիթ, այսինքն «Լե-
րան հնգեակ գազաթունք», որ կարաւանաց ճամբուն կը
տիրէ:

Եթէ ապստամբութիւնն ծանր համեմատութիւն-
ներ առնու, առանց քաղաքական հետեւութեանց վտան-
գի, կրնայ յարաբերութեանց մեծ փնտս հասցունել՝ վա-
ճառականի ճանապարհն գոցելով ընդ մէջ Ատէնի և
Հիւսիսեան գաւառին, ուր կը գտնուին Մէքքէ և Մէ-
տինէ:

Ըստ Տէյլի-Նիւզի մէկ հեռագրին հաստատուն
կարծիք մի կայ թէ ապստամբող ցեղն անուղղակի քա-
ջալերութիւն գտած է Մեծին-Բրիտանիոյ կողմէն: Սուլ-
թանն հրամայած էր ի սկզբան որ 10,000 զօրք զրկուի,
բայց յետոյ Նախարարաց Ժողովն մէկ երկու նիստ ընե-
լով ի պալատի որոշած է որ 2,000 միայն զրկուին:

Պոլսոյ մէջ խիստ գաղտնի կը պահուին յուզեալ
Դաւառին վերաբերեալ լուրերն: Ի միջի այլ յոռի զը-
րույաց՝ Կըսուի թէ Իսմայիլ փաշա, Եւմէնի կառավա-
րիչ, և իւր պաշտօնեայք սպաննուած են, և թէ ապս-
տամբք անկախութեան յայտարարութիւն ըրած են:
Կ. Պոլսէն կը հեռագրեն Եւրոպական լրագրաց:

Եւմէնէ եկած վերջին հեռագրեր կը ծանուցանեն
Թուրք զօրագնդոց մէկ նոր կռիւն ապստամբեալ ցեղե-
րու հետ: Թրքերն յաղթուած են և մեծ կորուստ կրած են:

Կը վախցուի թէ շարժումն Հիւսիսի ևս անցնի ուր
չառ ուխտաւորներ կան այս պահուս, ինչ որ մեծապէս
կրնայ ծանրացունել կացութիւնն:

Հեռագրական թելերն կտրուած են:

Դուռն կը շարունակէ իր պատրաստութիւններն
ապստամբաց դէմ: Հեծելազունք ունենալու համար,
Դուռն ստիպուած է եւս կանչելու Իզմիտի և Էնկիւրիի
միջեւ երկաթուղւոյ շինութիւնն աւազակաց դէմ պաշտ-
պանող մի քանի խումբերն:

Մովպետութիւնն ալ, չունենալով լաւ վիճակի
մէջ գտնուող փոխադրական նաւեր, ստիպուած է օտար
ընկերութեանց դիմել: Այս յղման ծախքն հոգալու հա-
մար ելմտական Նախարարն պարտի փոխառութեան դի-
մել:

ԱՆԳՂԻԱՅԻ ԱՂՋԻԿ ՄԻՔՐՈՒՆԵՆԻ Կ'ԱՌԵՒԱՆԳՈՒԻ

Բէյթի Կրիսֆիլտ, 14 տարեկան, Ազիլ անուն
Բրդէ մի առեւանգուած էր Մայիսին, և յետոյ Սուլ-
թանի միւլթիին տունը բերուած էր: Թրքական Բր-
դերն բռնի առեր տարեր են Թրքական Հիւպատոսարանն՝
զոր այժմ գինեալ 100 Բրդեր կը պաշտպանեն և կ'ըս-
պառնան կրակել ու և էցէ մէկն որ աշխատի աղջիկն
տեսնել: Քուրդ խռովայողներու թիւն շարունակ կ'ա-
ծի: Ուրմիայէն զօրք զրկուած է Սուլթան-Պուլաք, և պա-
հապան զօրք դրուած են Բրիտանական Հիւպատոսարանն
պաշտպանելու: — Թէպրիզէն կը ծանուցանեն թէ Ատր-
պատականի Կառավարիչն արքայական հրաման ընդու-
նած է աղջիկն ամենայն միջոցով ազատելու. եւ թէ Բր-
դերն ալ սպառնացած են աղջիկն մեռեալ յանձնել եթէ
զօրք երթայ իրենց վրայ:

ԿՐԻՏԵՒ ՎԻՃԱԿՆ

Գրեթէ բոլոր կղզին անիշխանութեան վիճակի
մէջ է: Բրիտանոնայք, իշխանութեանց կողմանէ գոր-
ծուած վայրագութիւններուն համար յուսահատած,
ստիպուած են իրենք ևս ոճիր գործել իրենց կեանքն
պաշտպանելու կամ վրէժ լուծելու համար:

«ՀԱՅՔ»-ի Թղթակցութիւններ

Մեծ . Տեարք Փ . Եղբարք ի Ռուսոնք — Կրնաք բաժնեգրին յանձնել Մեծ . Տիար Թիւթիւնճիէֆի :

Մեծ . Յ . Պ . Բոսթով օն Տօն ի Ռուսիա — Ձեր նամակ՝ ներդրակեալովն հանդրձ ընդունած եմք շնորհակալութեամբ :

ՀԱՅՔ-ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՀԱՅՔ»-ի բաժանորդ գրուել ուղղունքուն կը ծանուցանեմք թէ թերթիս առաջին թիւէն սկսեալ կարող եմք յղել իրենց . նոյնպէս պակասեալ թիւերն կրնամք յղել այն բաժանորդաց որք կը բաղձան ամբողջ տարեկանն կազմել տալ , ինչպէս կը տեղեկանամք թէ շատերուն փափաքն է :

Պարսկաստանի Հայոց Համար Բացառութիւն ընելով, թերթիս տարեկան բաժանորդագրին կը նշանակեմք եօթն ուկէս ֆրանք :

Հեղեկեալ ծանուցումն Ռուսիոյ «Օտէսա» քաղաքէն մեզ յղեալ է ի հրատարակութիւն :

Խնդրում եմ Ամերիկայի Պանդուխտ ազգայիններին, որոնք Օտէսա եկած և ինձանից ծանուցարհածախս առած են, «ՀԱՅՔ»-ի խմբագրութեան վճարել և ընկալադիր առնել իմ կողմանէ երկու օրինակի համար :—

Եղեարցի ՅԱՐՈՒԹԻՒՆ ԾԱՏՈՒՐԵԱՆ

ՓՈՒՐ ԱՍԻԱ ԻՐԲԵԻ ՇՏԵՄԱՐԱՆ ՅՈՐԵՆՈՅ

— Շատեր մոռցած են, կ'ըսէ Լոնտոնեան Տէյլի-նիւզ , այն տեղեկութիւններն որոց ուղարկութիւն եղաւ մի քանի տարի առաջ նկատմամբ Փոքր Ասիոյ ընդունակութեան հացահատիկներ ընձեռելու Եւրոպիոյ : Երկաթուղիներ այժմ կը թափանցեն ներսերն , և մեք չուտով Փոքր Ասիոյ ճոխութեան տալացոյցներն պիտի տեսնեմք : Բանիմաց Ամերիկացի շրջիկ մի, որ վերջերս այն կողմերէն եկաւ, ապաւն է անբաւ ցորենի դէզերուն համար որք արդէն Սիւլետար կը հասնին Էնկիւրիի կիսաշէն երկաթուղիովն : Նա մինչև անգամ երկիւղ կը յայտնէ Արևմտեան Ամերիկայի՝ իրբեւ ցորենոյ մեծ ամպարի՝ գերիշխանութեան նկատմամբ երբ Փոքր Ասիա պատշաճապէս պատրաստուի երկաթուղեօք :

— Կ . Պոլսէն Թանին կը հեռագրեն թէ Փռանապի ձեռնարկուն Տիար Նաուն , որ երկաթուղին Եաֆայէն ցնորուաղէմ շինած է , ուրիշ երկու դժերու շինութեան համար արտօնութիւն կը խնդրէ . մին պիտի Հայէպէն իւրէնաէրուն , միւսն Դամասկոսէն մինչև ծովուն մէկ ծայրագոյն կէտն հասնի :

**— Լոնտոնի «ՀԱՅԱՍՏԱՆ»էն
ՎԱՆԵՑԻ ՈՐԲԻ ԵՐԳՐ**

Արե'ւ , Արե'ւ , դուրս ելիր,
Աչքըդ , ունքդ ինձ ցոյց տուր .
Ցաւախց ջանքս դողում է ,
Չըպլախ որբիս տաքացուր :

Հօր ու մօրքս սպանաւ
Բաֆիր Թուրքը . ո'ւր գնամ :
Փարա չունիմ փառ առնեմ՝
Օջաղ վառեմ տաքանամ :

Արե'ւ , արե'ւ , թէզ արա ,
Բուք-բօրանք դալիս ա .
Էսօր ցրտից որ մեռնեմ ,
Էլ արեւըդ ինչի'ս ա ...

ՍԻՄԷՕՆ ՍՍՓԱՐԵԱՆՑ

ՏԻԿԻՆ ԱՏԱՄ ՆՈՒՎԷԼ ՌԵՎԻՒՄ ՄԷՋ

«Սուլթանն» կ'ըսէ , «ուղեւով ամեն բան ինքն որոշել , ամեն բան բարձի թողի ընել սկսած է , մէկ բացառութեամբ . այն է բանակն , վասն զի բանակն Նորին Վեհափառութեան անձնական ապահովութեանն կը ծառայէ : Ինչ կ'ըսէք Կ . պոլսէն չորս ժամ հեռուն չողեկաւքն կեցունող և կողոպտող աւազակաց մասին : Այս ինչ բարձր դադափար կուտայ Թուրքիոյ մէջ հանրային ա

պահովութեան նկատմամբ : Խմբագիր մի, Ահմէտ-Րիզա , կը յիշէ թէ ինչպէս Միսհաթ Փաշան , Չմիւռնիոյ կառավարիչ անուանուելով, մէկ ամսուան մէջ վերջ տրուաւ այն կողմերն արող աւազակութեան : Այս Աթանաս , խոտովանինք , մասնաւոր կերպ մ'ունի համակրելու և հակակրելու : Կառախմբին պետն նմա հաճոյ կը լինի, ուղեւոր մի նմա խօսք կը հասկցունէ . և ինքն ոչ միայն նոյա կը խնայէ , այլ և անսպով նոյա՝ ոչ ոք կը սպաննէ : Գրաւ կը դնեմ թէ Սուլթանն , եթէ բռնել տայ աւազակապետն , նուազ մեղմ պիտի վարուի քան վայրաք Մուսա Պէկի հետ , սր կը կոտորէր և կը շարժարէր Հայերն :

— ԱՐՉԱԳԱՆՔ , կ'ըսէ Լոնտոնեան ԱՌՄԷՆԻՆ . հրատարակած է Կովկասի և Ռուսական Հայաստանի վերջին աշխարհահամարին արդիւնքն , յորմէ կը տեսնուի թէ Նոր Պայագիտի քաղաքաւանին բնակչաց թիւն է 7,448 , որոց 7,426 ն Հայ են : Հայ են հարիւրին 95 ն Ալէքսանդրապոլի և Ախալքալաքի , 82 ն՝ Թեւաւի , 80 ն՝ Ախալցը-խաի , 76 ն՝ Արդովինի , 64 ն՝ Կարսի , 62 ն՝ Տուշէթի , 60 ն՝ Շուշիի , 47 ն՝ Գանձակի , 40 ն՝ Կարիի , 36 ն՝ ի Թիֆլիս , (այսինքն 104,024 բնակչաց 37,448 ն) 30 ն՝ Նախիջևանի , 28 ն՝ Պաքուի և 12 ն՝ Պաթսւմի :

— ԼՍՌՄԷՆԻ Հետեւեալ տողերն կ'առնու ՌԵՆՆՈՒՍԻ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԷՆ . «Անգղիոյ վերայ կ'իյնայ Հայաստանի արհաւիրաց պատասխանատուութիւնն : Թուրքիա աւանդական թշնամին է քաղաքակրթութեան : Յօգուտ ո'չ լիկ հպատակ ցեղիցն այլ բովանդակ Եւրոպայի , պարսի Թուրքիան ջնջուիլ աշխարհացոյց տախտակէն :

ՏՈՒՐՈՐ Ա՝ ԱՅՎԱԶԵԱՆ

Պոխագրած է իւր բնակարան ի թիւ 164 , Արեւելք 80 րդ փողոց , ուր հիւանդ կ'ընդունի առաւօտեան ժամ 8 էն 9 և երեկոյեան ժամ 6 էն 8 :

**ՓՈՒՆՆԱԿՆԳԻՐ
ԵՒ
ՆԱԽԻ ՏՈՄՍԿԻ**

Ութ տարուան փորձառութիւնն կ'ապահովէ հասարակութիւնն թէ մեր փոխանակադրեր են ամենաժան և ապահով Թուրքիոյ ամեն քաղաքաց համար, կեդրոնա-տեղիք ԵՂԼալով Խարրերդ և Կ . Պոլիս : Նոյնպէս կրնամք դրամ զրկել Եւրոպա ուր որ ուզուի պանդայի միջոցով : Նաեւ գոհացուցիչ գներով սոմսակ կը վաճառեմք Ամերիկայէն Եւրոպա , Եւրոպայէն Ամերիկա ճամբորդելու համար , նոյնպէս Թուրքիոյ ամէն նաւահանգիստներէն դալու և երթալու համար Թրիէսթի ճամբով : Նամակներու անմիջապէս կը պատասխանուի : Պէտք է դիմել կամ զը ԵՂ Ինձ այսպէս M. S. T. Nahigian, Worcester Mass.

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY

16 և 17 րդ փողոցներու միջև արեւելեան կողմն :

—Ընտիր Գաղղիական խոհարարութիւն—

Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

ED. LEGOLL, PHARMACIST,

Successor to W. CASWELL,

Pharmacie Francaise,

286 SEVENTH AVE., BET 26 TH & 27 TH STS., N. Y.

ESTABLISHED 1846.

Դեղագրեր կը պատրաստուին խնամով

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

Մ . Ս . Դ Ա Բ Ր Ի Է Լ Ե Ա Ն